Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-699[2]-07.11.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պրոբացիայի ծառայության մասին» 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՀՕ-422-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Պրոբացիայի ծառայությունն» բառերը փոխարինել «Պրոբացիան» բառով, իսկ «մասնագիտական» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ վերասոցիալականացման և վերականգնողական» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 4. Քաղաքացիական ծառայողները**».

2) 3-րդ մասում «գլխավոր քարտուղարին» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացման և վերականգնողական ստորաբաժանումը, որն անմիջական հաշվետու է Պրոբացիայի ծառայության պետին» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ *Պ-699-07.11.2023,12.01.2024-ՊԻ-011/1)* ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	«Պրոբացիայի ծառայության մասին» 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՀՕ-422-Ն օրենք	Նախագծերի փաթեթը լրացնել օրենքի նախագծով, որով նախատեսվում է շտկել քաղաքացիական ծառայությունից անցումային փուլում պրոբացիայի Ծառայության կառուցվածքը ըստ ծառայության տեսակների (քաղաքացիական ծառայություն և պրոբացիայի ծառայություն) վերահաստատելու գործընթացում օրենքում ի հայտ եկած տեխնիկական բնույթի անճշտությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է :